ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անունը, Ազգանունը.
   Արայիկ Հարությունյան
2. Զբաղեցրած պաշտոնը.
   ՀՀ կրթության և գիտության նախարար
3. Գործուղման վայրը և ժամկետները.
   Իսրայել (Երուսաղեմ), 2019 թվականի մարտի 15-17
4. Հրավիրող կողմը.
   Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն
5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
   Երուսաղեմում Հայոց պատրիարքության և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև համագործակցային ուղիների քննարկում: Գործուղման նպատակը՝ ծանոթանալ Երուսաղեմի Միաբանության, Հայոց ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի գործունեության ու հայկական ժառանգության պահպանման հետ կապված խնդիրներին, ինչպես նաև նոր պայմանավորվածություններ ձեռք բերել երկկողմ փոխգործակցության զարգացման ուղղությամբ:
6. Քննարկված թեմաները.
   - Երուսաղեմում գործող Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի և Ժառանգավորաց Վարժարանի ու Ընծայարանի ուսումնական գործընթացի հիմնախնդիրներ,
   - Մայր Դիվանի՝ Ձեռագրաց տան և Գյուլբենկյան Մատենադարանների գործունեության հիմնախնդիրներ՝ պատմա-մշակութային արժեքների պահպանման անհրաժեշտություն,
   - տարածաշրջանում հայկական ինքնության և մշակութային ժառանգության պահպանման ու հայագիտության զարգացման հարցեր,
   - Երուսաղեմում գործող հայկական կրթամշակութային հաստատությունների մի շարք խնդիրների լուծման առաջարկների քննարկումներ:
7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
   Մարտի 15-ին և 16-ին հանդիպումներ են տեղի ունեցել Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Լուսարարապետ Տեր Արքեպիսկոպոս Սևան Ղարիբյանի, Տ.Սամվել ծայրագույն վարդապետ Աղոյանի և Պատրիարքության այլ ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում երկուստեք կարևորվեց Երուսաղեմում գործող կրթամշակութային հաստատությունների շարունակական

գործունեության անհրաժեշտությունը, պատմամշակութային արժեքների պահպանումը, ինչի համար հետագայում կմշակվեն առաջարկներ և լուծման ուղիներ՝ մասնավորապես Իսրայելում հայագիտական ամբիոնի բացման և թանգարանագիտական հանձնախմբի մասնագիտական փորձի ներդրման ուղիով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
   Հաշվի առնելով բարձրացրած խնդիրները, մասնավորապես արևմտահայերեն դասագրքերի բովանդակության վերանայումը և հասանելիությունը, «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների մասնագիտական ռեսուրսի պակասը, վարժարանի լիցենզավորման և հավատարմագրման հարցերը՝ առաջարկվել է կատարել խորքային ուսումնասիրություն խնդիրներին համակարգային լուծում տալու համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
   Կարևորելով Մայր դիվանի՝ Ձեռագրաց տան և Գյուլբենկյան մատենադարանների գործունեությունը, նշվել է պատմամշակութային արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Առաջարկվել է հրավիրել թանգարանագետների և ոլորտի լավագույն մասնագետների, ովքեր իրենց ողջ մասնագիտական փորձը կներդնեն ի նպաստ Մայր դիվանի շարունակական գործունեության:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՀՀ կրթության և գիտության նախարար

Արայիկ Հարությունյան

21/03/2019թ.